ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

<<15>> փետրվարի 2024 թ. քաղաք Մարալիկ

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանը նշեց, որ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ ընթացիկ տարվա հունվարի 31-ին հրավիրված համայնքի ավագանու արտահերթ նիստի իրավազորությունը չապահովվելու պատճառով համայնքի ավագանու արտահերթ նիստը չկայացավ:

Այսօր ևս հրատապ անհրաժեշտություն է առաջացել համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ համայնքի ավագանու արտահերթ նիստ հրավիրելու համար, որը հիմնականում պայմանավորված է համայնքի 2024 թվականի բյուջեում, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ոչ առևտրային երեք կազմակերպությունների հաստիքացուցակներում փոփոխություններ կատարելու, Հայոց բանակի կազմավորման 32-րդ տարելիցի կապակցությամբ Անի համայնքից արցախյան պատերազմներում և Հայաստանի Հանրապետության սահմանները պաշտպանելիս վիրավորում ստացած թվով 7 զինծառայողներին դրամական աջակցություն տրամադրելու և ընթացիկ մի շարք հարցերի քննարկման հետ:

Հիշեցման կարգով տեղեկացվեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի համաձայն ավագանու հերթական առաջին նստաշրջանը գումարվում է փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև հունիսի վերջին չորեքշաբթին, իսկ երկրորդ նստաշրջանը՝ սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին: Նստաշրջանի ընթացքում յուրաքանչյուր ամիս հրավիրվում է ավագանու առնվազն մեկ նիստ: Իսկ Համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 18-ի N 7-Ա որոշմամբ Անի համայնքի ավագանու նստաշրջանների գումարման համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման օր է սահմանված յուրաքանչյուր ամսվա վերջին հինգշաբթին:

Համայնքի ավագանուն եղեկացվեց, որ թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի <<<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹՎՈՎ 7 /ՅՈԹ/, <<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹՎՈՎ 2 /ԵՐԿՈՒ/ ԵՎ <<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 1 /ՄԵԿ/ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 114-Ա որոշումը ի

2024 թվականի հունվարի 4-ի N N 17, 18 և 19 արձանագրություններով Անի համայնքի ավագանու <<Ազգ-Համայնք>> կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից հանված և լիազորությունները վաղաժամկետ դադարեցված ավագանու անդամներ՝ ԱՐՏԱԿ ՍԱՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԱՎԵՏԻՔ ԱՐՏՈՒՇԻ ՆԱՋԱՐՅԱՆԻ, ԿԱՏՅԱ ՋԻՎԱՆԻ ՆԱԽՇՔԱՐՅԱՆԻ, ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ ՆԻԿՈՅԱՆԻ, ԶԱՎԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿԻ ՄԿՈՅԱՆԻ և ԱՆՆԱ ՀԱԿՈԲԻ ԱՎԴԱԼՅԱՆԻ մանդատները տրվել են՝ <<Ազգ-Համայնք>> կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ՝ ԳԵՎՈՐԳ ՆՈՐԻԿԻ ՂԶՐՈՅԱՆԻՆ, ՍՈՍ ՄՈՒՇԵՂԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ, ԿԱՐԵՆ ՌՈԲԵՐՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ԱՐՍԵՆ ՊԱՐՈՒՅՐԻ ՎԱՐՈՍՅԱՆԻՆ, ԼՈՒԻԶԱ ՍԵՆՈՅԻ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆ ՎԻԼԻԿԻ ՆԻԿՈՅԱՆԻՆ և ԼԻԱՆՆԱ ՅՈՒՐԻԿԻ ԲԱԼՈՅԱՆԻՆ:

Անի համայնքի ավագանու <<Իմ հզոր համայնք>> կուսակցության ընտրական ցուցակից հանված և լիազորությունները վաղաժամկետ դադարեցված ավագանու անդամ՝ ԱՐՄԵՆԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԻ ՆԱՋԱՐՅԱՆԻ մանդատը տրվել է <<Իմ հզոր համայնք>> կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ ԱՐՄԵՆԱԿ ՍՈՒՐԻԿԻ ՄԵԼՈՅԱՆԻՆ:

Իսկ Անի համայնքի ավագանու <<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> կուսակցության ընտրական ցուցակից հանված և լիազորությունները վաղաժամկետ դադարեցված ավագանու անդամներ՝ ԱԳՈՒՆ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ և ՀԱՍՄԻԿ ԳԱԳԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ մանդատներ տրվել են <<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ՝ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԱԼԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ և ԱՆԱՀԻՏ ԶԱՎԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ:

. Համայնքի ղեկավարը շնորհավորեց ավագանու մանդատներ ստացած գործընկերներին, ցանկացավ նրանց արդյունավետ և կառուցողական աշխատանք՝ Անի համայնքի տնտեսական և սոցիալական զարգացման, համայնքի բնակչության բարեկեցության ապահովման կարևորագույն գործում:

Զեկուցվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից, համայնքի ավագանու արտահերթ նիստին մասնակցում են <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու 11 անդամները՝

1. ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ,
2. ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
3. ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆԸ,
4. ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆԸ,
5. ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆԸ,
6. ՀԱՍՄԻԿ ԶԱՏԻԿՅԱՆԸ,

7. ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆԸ,
8. ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ,
9. ԺԻՐԱՅԻ ԱԼԵՔՅԱՆԸ,
10. ՆԱԻՐԱ ՍԱՐՈՅԱՆԸ,
11. ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆԸ:

Համայնքի ավագանու նիստին ներկա են Անիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, համայնքի ներկայացուցիչներ:

Համայնքի ավագանու արտահերթ նիստին հարգելի կարգով բացակայում են ավագանու անդամի նոր մանդատներ ստացած՝

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ավագանու 7 անդամները՝

1. ԳԵՎՈՐԳ ՂԶՐՈՅԱՆԸ,
2. ՍՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ,
3. ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ,
4. ԱՐՍԵՆ ՎԱՐՈՍՅԱՆԸ,
5. ԼՈՒԻԶԱ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԸ,
6. ԱՐՄԵՆ ՆԻԿՈՅԱՆԸ,
7. ԼԻԱՆՆԱ ԲԱԼՈՅԱՆԸ,

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու 2 անդամը՝

1. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ
2. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ:

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝

ԱՐՄԵՆԱԿ ՄԵԼՈՅԱՆԸ:

Դրանով հանդերձ, ավագանու նիստի քվորումը ապահովված է, համայնքի ավագանու արտահերթ նիստը հայտարարվեց բացված:

Առաջարկվեց անցնել օրակարգային հարցերի քննարկմանը:

Տեղեկացվեց, որ օրենքով սահմանված կարգով և ժամկետում համայնքի ավագանու անդամներին են ուղարկվել այսօրվա նիստի օրակարգը և ավագանու որոշումների նախագծերը:

Ներկայացվեց համայնքի ավագանու արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 90-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ <<ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼԻՍ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 5-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 114-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-022-0101-0044 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 10.45565 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-022-0157-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 4.39971 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0020-0183 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.01215 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ 08-003-0602-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

16) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-049-0226-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.951935 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Հայտարարվեց, որ ավագանու օրակարգի նախագիծը հրապարակված է, եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում եմ ներկայացնել:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու նիստի օրակարգը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով հաստատվեց համայնքի ավագանու նիստի օրակարգը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի, 65-րդ հոդվածի դրույթներով,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ին ժամը 15^{00}-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք ավագանու արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 90-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ <<ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԱՐՑԱԽ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՋԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵ

ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 5-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 114-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-022-0101-0044 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 10.45565 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-022-0157-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 4.39971 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0020-0183 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.01215 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ 08-003-0602-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

16) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-049-0226-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.951935 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ՝ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՉԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգ-2</u>

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ հաշվի առնելով համայնքապետարանի ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ աշխատանքների ծանրաբեռնվածությունը, նախագծով նախատեսվում է մեկ միավոր

համայնքային ծառայողի հաստիքի ավելացում և համայնքային ծառայության կրտսեր խմբի ենթախմբերի հաստիքների որոշակի փոփոխություն:

Ներկայացվեց բաժնի նախատեսվող հաստիքացուցակը:

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը
				(Հազար դրամ)	(Հազար դրամ)
	5. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺԻՆ				
5.1	Բաժնի պետ	1	1	370,0	370,0
5.2	Բաժնի առաջատար մասնագետ	1	1	250,0	250,0
5.3	Բաժնի առաջին կարգի մասնագետ	2	1	220,0	440,0
5.4	Բաժնի երկրորդ կարգի մասնագետ	2	1	180,0	360,0
	Ընդամենը	6			1420,0

Կատարված փոփոխության արդյունքում, բաժնի աշխատավարձի ամսեկան ծախսը ավելանում է 190 հազ. դրամով:

Համայնքում իրականացվող անասնաբուժական ծառայության որակը բարձրացնելու նպատակով, որոշման 2-րդ կետով նախատեսվում է՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ 6 միավոր անասնաբույժների հաստիքը ավելացնել 2-ով, պաշտոնական դրույքաչափը 1 միավորի փոխարեն սահմանել 0,75 դրույք: Արդյունքում աշխատավարձի ծախսը թողնվում է անփոփոխ /ամսեկան 660 հազ. դրամ:

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը
				(Հազար դրամ)	(Հազար դրամ)
	13. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
13.1	Անասնաբույժ	8	0,75	110,0	660,0

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի դրույթներով:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի 2024 թվականի կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 12-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 108-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Որոշման հավելվածի <<5. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺԻՆ>> գլուխը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (Հազար դրամ)	Ընդամենը (Հազար դրամ)
	5. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺԻՆ				
5.1	Բաժնի պետ	1	1	370,0	370,0
5.2	Բաժնի առաջատար մասնագետ	1	1	250,0	250,0
5.3	Բաժնի առաջին կարգի մասնագետ	2	1	220,0	440,0
5.4	Բաժնի երկրորդ կարգի մասնագետ	2	1	180,0	360,0
	Ընդամենը	6			1420,0

բ) Որոշման հավելվածի 13.1-րդ տողը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (Հազար դրամ)	Ընդամենը Հազար դրամ)
	13. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
13.1	Անասնաբյուժ	8	0,75	110,0	660,0

գ) Որոշման հավելվածի վերջին <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողի 6-րդ սյունակի <<25195,0>> թիվը

փոխարինել <<25385,0>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Օրակարգ-3

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 90-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Հարցելի գործընկերներ.

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է «<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթով դրույթներով:

Համայնքի ավագանու 2023 թվականի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային բյուջետային հիմնարկը համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին>> N 90-Ա որոշմամբ <<Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային բյուջետային հիմնարկը վերակազմակերպել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Անի մանկապատանեկան համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության: Որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանով, որ Անի համայնքի Մարալիկի քաղաքի <<Անի մանկապատանեկան համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կրթա-դաստիարակչական ծրագրերով կատարելագործման խմբում նախատեսված է ընդգրկված 19-22 տարեկան երիտասարդների: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել մարզադպրոցի անվանման մեջ <<մանկապատանեկան>> բառը հանել և ՀՈԱԿ-ը անվանել՝ <<Անի համալիր մարզադպրոց>> ՀՈԱԿ:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 90-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթով և հաշվի

առնելով, որ Անի համայնքի <<Մարալիկի մանկապատանեկան համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կրթա-դաստիարակչական ծրագրերով կատարելագործման խմբում նախատեսված է ընդգրկված 19-22 տարեկան երիտասարդների.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային բյուջետային հիմնարկը համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին>> N 90-Ա որոշման առաջին կետում նշված <<մանկապատանեկան>> բառը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Օրակարգ-4</u>

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 34-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ կետի 1-ին մասի դրույթներով:

Որոշման նախագծի 1-ին կետով նախատեսվում է Լանջիկի <<ՋԻՈՒՋԵՊՊԵ ՊԻՆՈ ՉԻԱՉԻՈՅԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> համայնքային ոչ առեվտրային կազմակերպության 2024 թվականի հաստիքացուցակում <<Բուժքրոջ>> 0,75 դրույքը փոխարինել <<0,5>> դրուքով: Փոփոխությունը կատարվում է հաշվի առնելով բուժքրոջ աշխատանքի ոչ մեծ ծանրաբեռնվածությունը: Փոփոխության արդյունքում աշխատավարձի ամսեկան ծախսը նվազում է 30 հազ. դրամով:

Որոշման նախագծի հաջորդ կետով նախատեսվում է Անի համայնքի <<ՌՈՄԻ ԲԱՐՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> համայնքային ոչ առեվտրային կազմակերպության 2024 թվականի հաստիքացուցակում <<Ֆիզկուլտ-հրահանգչի>> 1 դրույքը փոխարինել <<0,75>> դրուքով: Փոփոխությունը կատարվում է հաշվի առնելով Ֆիզկուլտ-հրահանգչի աշխատանքի ոչ մեծ ծանրաբեռնվածությունը: Փոփոխության արդյունքում աշխատավարձի ամսեկան ծախսը նվազում է 26 հազ. դրամով:

Որոշման նախագծի հաջորդ կետով նախատեսվում է Անի համայնքի <<ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2024 թվականի հաստիքացուցակում <<Աթլետիկայի մարզիչի>> <<0,5>> դրույքը փոխարինել <<1,0>> դրուքով: Փոփոխությունը կատարվում է հաշվի առնելով աթլետիկայի մարզչի աշխատանքի

ծանրաբեռնվածությունը: Փոփոխության արդյունքում աշխատավարձի ամսեկան ծախսը ավելանում է 65 հազ. դրամով:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 109-Ա որոշման N 3 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Որոշման հավելվածի 13-րդ տողի 5-րդ սյունակի <<0,75>> թիվը փոխարինել <<0,5>> թվով,

բ) նույն տողի 6-րդ սյունակի <<90000>> թիվը փոխարինել <<60000>> թվով:

գ) Վերջին՝<<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողի 5-րդ սյունակում նշված <<12,49>> թիվը փոխարինել <<12,24>> թվով, իսկ 6-րդ սյունակում նշված <<1 516 900>> թիվը փոխարինել <<1 486 900>> թվով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 109-Ա որոշման N 6 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Որոշման հավելվածի 17-րդ տողի 5-րդ սյունակի <<1>> թիվը փոխարինել <<0,75>> թվով:

բ) նույն տողի 6-րդ սյունակի <<104 000>> թիվը փոխարինել <<78 000>> թվով:

գ) Վերջին՝ <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողի 5-րդ սյունակում նշված <<26,1>> թիվը փոխարինել <<25,85>> թվով, իսկ 6-րդ սյունակում նշված <<3 075 000>> թիվը փոխարինել <<3 049 000>> թվով:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 109-Ա որոշման N 7 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Որոշման հավելվածի 16-րդ տողի 5-րդ սյունակի <<0,5>> թիվը փոխարինել <<1>> թվով, 6-րդ տողի <<65000>> թիվը փոխարինել <<130000>> թվով:

բ) Վերջին՝ <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողի 5-րդ սյունակում նշված <<28>> թիվը փոխարինել <<28,5>> թվով, 6-րդ սյունակում նշված <<3516000>> թիվը փոխարինել <<3 581 000>> թվով:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Օրակարգ-5</u>

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ <<ԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, Որ Անի համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 90-Ա որոշմամբ Անի համայնքի <<Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային բյուջետային հիմնարկը վերակազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության: <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն համայնքի ավագանուն է վերապահված կազմակերպության կանոնադրության հաստատումը: Կանոնադրությանը մշակված է ՀՀ օրենսդրության և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածով սահմանված ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման պահանջներից ելնելով:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ <<ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 90-Ա որոշումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կանոնադրությունը կցվում է արձանագրությանը:

Օրակարգ-6

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 5-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սահմանել սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները: Այն կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով:

Տեղեկացվեց, որ չափորոշիչները մշակվել են հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարության կողմից մշակված «Սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին» ուղեցույցը: Որոշմամբ կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման ընթացակարգերը:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 5-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարության կողմից մշակված «Սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին» ուղեցույցը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սահմանել սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> N 5-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Օրակարգ-7

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼԻՍ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Հարգելի գործընկերներ.

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից, Հայոց բանակի կազմավորման 32-րդ տարելիցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքից արցախյան պատերազմներում և Հայաստանի Հանրապետության սահմանները պաշտպանելիս վիրավորում ստացած թվով 71 զինծառայողների, յուրաքանչյուրին, 30 000 /երեսուն հազար/ դրամի չափով տրամադրել դրամական աջակցություն, ընդհանուր գումարը կազմում է 2 130 000 ՀՀ դրամ:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 10-րդ հոդվածի 11-րդ մասի դրույթներով, հիմք է ընդունվել Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի N 5 որոշումը և Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի

20-ի N 196-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սոցիալական հարցերի հանձնաժողովի առաջարկությունը:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼԻՍ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 10-րդ հոդվածի 11-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի N 5 որոշումը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 20-ի N 196-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սոցիալական հարցերի հանձնաժողովի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից, Հայոց բանակի կազմավորման 32-րդ տարելիցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքից արցախյան պատերազմներում և Հայաստանի Հանրապետության սահմանները պաշտպանելիս վիրավորում ստացած թվով 70 զինծառայողներին յուրաքանչյուրին տրամադրել 30 000 /երեսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ աջակցություն /ընդամենը՝ 2 100 000 Հայաստանի Հանրապետության դրամ/՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման հավելվածը կցվում է արձանագրությանը:

<u>Օրակարգ-8</u>

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել Անիի համայնքապետարան ստացված Սառնաղբյուր բնակավարի վարչական ղեկավար՝ Գագիկ Սարոյանի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի զեկուցագիրը, Անի համայնքի Անիպեմզա, Անիավան, Հայկաձոր և Ջրափի բնակավայրերի հանրակրթական դպրոցների

մանկավարժների 2024 թվականի հունվարի 26-ի դիմումը և <<<<Հակոբյաններ>> Համահայկակն մշակութային կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահի 2024 թվականի հունվարի 24-ի գրությունը՝ դրամական միջոցներ հատկացնելու խնդրանքներով:

Առաջարկություն ստացվեց դիմումները քննարկել առանձին-առանձին:

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է՝

1. Անի համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 /Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ և տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից /կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ հատկացնել՝ Իտալիայի Վենետիկ քաղաքում անցկացվելիք վենետիկյան երաժշտական /դիոլ/ կոնկուրս-փառատոնին Սառնաղբյուր բնակավարի բնակիչ Արմենակ Ալիկի Մանուկյանի մասնակցության համար:

2. Անի համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 /Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն/ և տնտեսագիտական դասակարգման 4637 /Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին/ հոդվածից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Հայկաձորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 240 000 /երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ՝ Գյումրի քաղաքից Ջրափի, Հայկաձոր, Բագրավան և Անիպեմզա բնակավայրերի հանրակրթական դպրոցներում աշխատող մանկավարժների ընթացիկ տարվա առաջին չորս ամիսների ուղևորափոխադրումների ծախսերը կատարելու համար:

3. Անի համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 (Միջնակարգ ընդհանուր կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4637 (Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից, որպես համայնքի ներդրում՝ 4 456 704 /չորս միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր չորս/ ՀՀ դրամ հատկացնել ««Հակոբյաններ» Համահայկական Մշակութային Կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ Անի միավորված համայնքի հանրակրթական դպրոցներից ընտրված լավագույն գերազանցիկ աշակերտներին, որպես խրախուսանք, դեպի Դուբայ 7-օրյա կրթական շրջագայությունն ապահովելու համար:

Որոշման նախագծի 1-ին կետի վերաբերյալ արտահայտվեց Սառնաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար Գագիկ Սարոյանը: Առաջարկեց ընդունել որոշման նախագիծը և 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ հատկացնել՝ Իտալիայի Վենետիկ քաղաքում անցկացվելիք վենետիկյան երաժշտական /դիոլ/ կոնկուրս-փառատոնին Սառնաղբյուր բնակավարի բնակիչ Արմենակ Ալիկի Մանուկյանի մասնակցության համար:

Առաջարկություն ստացվեց ընդունել որոշման նախագծի 1-ին և 2-րդ կետերը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշման 1-ին և 2-րդ կետերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 42-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի N 5-Ա որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին հասցեագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուր բնակավարի վարչական ղեկավար՝ Գ. Սարոյանի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի զեկուցագիրը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 /Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ և տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից /կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ հատկացնել՝ Իտալիայի Վենետիկ քաղաքում անցկացվելիք վենետիկյան երաժշտական /դիոլ/ կոնկուրս-փառատոնին Սառնաղբյուր բնակավարի բնակիչ Արմենակ Ալիկի Մանուկյանի մասնակցության համար:

2. Հաշվի առնելով, որ Արմենակ Ալիկի Մանուկյանը անչափահաս է, սույն որոշման 1-ին կետով նախատեսված գումարը հատկացնել ծնողին՝ Ալիկ Մուշեղի Մանուկյանին /Նույնականացման քատ՝ 010050102, տրված՝ 14.12.2017թ, 001-ի կողմից, բնակության հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Սառնաղբյուր, 15-րդ փողոց, տուն 24/:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշման նախագծի 3-րդ կետի՝ Գյումրի քաղաքից Ջրափի, Հայկաձոր, Բագրավան և Անիպեմզա բնակավայրերի հանրակրթական դպրոցներում աշխատող մանկավարժների ընթացիկ տարվա առաջին չորս ամիսների ուղևորափոխադրումների ծախսերը փոխհատուցելու հարցի վերաբերյալ արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Հասմիկ Զատիկյանը, Ռուզաննա Արշակյանը, Ժիրայր Ալեքյանը, Արտակ Շաբոյանը: Քննարկման արդյունքում, նպատակահարմար չհամարվել Գյումրի քաղաքից Ջրափի, Հայկաձոր, Բագրավան և Անիպեմզա բնակավայրերի հանրակրթական դպրոցներում աշխատող մանկավարժների ընթացիկ տարվա առաջին չորս ամիսների ուղևորափոխադրումների ծախսերը կատարելու համար համայնքի բյուջեից 240 հազ. դրամ հատկացումը, հիմնավորելով, որ այդ մանկավարժները ուղևորափոխադրումների համար ստանում են համապատասխան փոխհատուցում:

Քվեարկության կողմ՝ 4, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 0 արդյունքներով համայնքի ավագանու որոշման 3-րդ կետը չընդունվեց:

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻՑ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՓԻ, ՀԱՅԿԱՁՈՐ, ԲԱԳՐԱՎԱՆ ԵՎ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 42-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի N 5-Ա որոշումը և հաշվի առնելով համայնքի բյուջեի ֆինանսական սահմանափակ հնարավորությունները.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Մերժել՝ Անի համայնքի Անիպեմզա, Անիավան, Հայկաձոր և Ջրափի բնակավայրերի հանրակրթական դպրոցների մանկավարժների 2024 թվականի հունվարի 26-ի դիմումը՝ Գյումրի քաղաքից Ջրափի, Հայկաձոր, Բագրավան և Անիպեմզա բնակավայրերի հանրակրթական դպրոցներում աշխատող մանկավարժների ուղևորափոխադրումների ծախսերը փոխհատուցելու վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Զեկուցողը ներկայացրեց ավագանու որշման նախագծի 4-րդ կետը, որով նախատեսվում էր համայնքի 2024 թվականի բյուջեից 4 456 704 /չորս միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր չորս/ ՀՀ դրամ հատկացնել ««Հակոբյաններ» Համահայկական Մշակութային Կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ Անի միավորված համայնքի հանրակրթական դպրոցներից ընտրված լավագույն գերազանցիկ աշակերտներին, որպես խրախուսանք, դեպի Դուբայ 7-օրյա կրթական շրջագայությունն ապահովելու համար:

Հարցի վերաբերյալ արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Հասմիկ Զատիկյանը, Ռուզաննա Արշակյանը, Ժիրայր Ալեքյանը, Արտակ Շաբոյանը, Էդիկ ՈՒռուտյանը:

Արտահայտվողները կարծիք արտահայտեցին այն մասին, որ <<<<Հակոբյաններ>> Համահայկակն մշակութային կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահի 2024 թվականի հունվարի 24-ի գրության մեջ ներկայացված չեն համայնքի հանրակրթական դպրոցներից ընտրված լավագույն գերազանցիկ աշակերտներին, որպես խրախուսանք, դեպի Դուբայ 7-օրյա կրթական շրջագայության համար հայցվող գումարի չափի հիմնավորվածությունը, իսկ հանրակրթական դպոցներորում խրախուսանքի ենթակա հավակնորտ աշակերտների ընտրությունը կատարվել են ոչ մրցութային և հրապարակային ընթացակարգով:

Քվեարկության կողմ՝ 3, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 8 արդյունքներով համայնքի ավագանու որոշման նախագծի 4-րդ կետը չընդունվեց:

<<<<ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐ>> ՀԱՄԱՀԱՅԿԱԿՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՀԱԿՈԲՅԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԴԻՄՈՒՄԸ՝ ԱՆԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ, ԴԵՊԻ ԴՈՒԲԱՅ 7-ՕՐՅԱ ԿՐԹԱԿԱՆ

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 42-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի N 5-Ա որոշումը և հաշվի առնելով <<<<Հակոբյաններ>> Համահայկակն մշակութային կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահի 2024 թվականի հունվարի 24-ի գրության մեջ ներկայացված չեն համայնքի հանրակրթական դպրոցներից ընտրված լավագույն գերազանցիկ աշակերտներին, որպես խրախուսանք, դեպի Դուբայ 7-օրյա կրթական շրջագայության համար հայցվող գումարի չափի հիմնավորվածությունը, իսկ հանրակրթական դպոցներում խրախուսանքի ենթակա հավակնորտ աշակերտների ընտրությունը կատարվել են ոչ մրցութային և հրապարակային ընթացակարգով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Մերժել <<<<Հակոբյաններ>> Համահայկակն մշակութային կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ Ս. Հակոբյանի 2024 թվականի հունվարի 24-ի դիմումը՝ Անի միավորված համայնքի հանրակրթական դպրոցներից ընտրված լավագույն գերազանցիկ աշակերտներին, որպես խրախուսանք, դեպի Դուբայ 7-օրյա կրթական շրջագայությունն ապահովելու համար դրամական հատկացում կատարելու վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Օրակարգի հաջորդ՝ 3 հարցերը ներկայացնելու համար ձայնը տրվեց Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար տիկին Անժելա Սաղաթելյանին:

՝Օրակարգ-9

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով:

Առաջարկվեց՝ Անի համայնքի 2024 թվականի բյուջետային տարվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի հոդվածների միջև փոփոխություններ կատարելու չափ սահմանել՝ մինչև 30 (երեսուն) տոկոս:

Առաջարկություն ստացվեց ընդունել որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջետային տարվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի հոդվածների միջև փոփոխություններ կատարելու չափ սահմանել՝ մինչև 30 (երեսուն) տոկոս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Օրակարգ-10

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 114-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

Զեկուցողը համայնքի ավագանուն համապատասխան հիմնավորում ներկայացրեց՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 114-Ն որոշման N N 1, 2, 3 հավելվածներում փոփոխություններ կատարելու ամիրաժեշտության վերաբերյալ:

Առաջարկություն ստացվեց ընդունել որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումն ընդունվեց:

Որոշման հավելվածները կցվում են արձանագրությանը:

Օրակարգ-11

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Անի համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման մասին:

Քննարկման արդյունքում առաջարկություն ներկայացվեց հաստատել համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման մասին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

Որոշման հավելվածները կցվում են արձանագրությանը:

Օրակարգի հաջորդ՝ հարցերը ներկայացնելու համար ձայնը տրվեց համայնքի ղեկավարի տեղակալ Զ. Խաչատրյանին:

<u>Օրակարգ-12</u>

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-022-0101-0044 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 10.45565 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ՞ ՆՊԱՏԱԿՈՎ «ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 31-Ա հրամանով «ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման 04.02.2019թ. ՇԱԹ-29/597 թույլտվության, 04.02.2019 թ. N Լ-597 լեռնհատկացման ակտի և ընդերքօգտագործման 04.02.2019թ. N Պ-597 պայմանագրի համաձայն «ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլատրված է 45 տարի ժամկետով Անի համայնքի Բագրավան բնակավայրի տարածքում գտնվող Խարկովի տուֆի և պեմզայի հանքավայրում տուֆ քարի արդյունահանման աշխատանքներ իրականացնել:

Օրենսդրությամբ սահմանված կարգով լեռնհատկացման ակտի կոորդինատներով սահմանազատված արոտ հողատեսքի հողամասի նպատակային նշանակությունը փոխադրվել է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակություն, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակություն:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով:

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի վարչական տարաքում գտնվող /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Բագրավան, 20-րդ փողոց, 1 հողամաս/, համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-022-0101-0044 կադաստրային ծածկագրով **10.45565 հեկտար** հողամասը (Վկայական N 29012020-08-0064) տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով մինչև՝ 2064 թվականի փետրվարի 4-ը, **550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ** տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել «ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ այդ հողամասում տուֆ քարի արդյունահանում իրականացնելու համար:

Քննարկման արդյունքում առաջարկություն ներկայացվեց ընդունել համայնքի ավագանու որշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-022-0101-0044 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 10.45565 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 26-ի թիվ 51 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 31-Ա հրամանով

«ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման 04.02.2019թ. ՇԱԹ-29/597 թույլտվությունը, 04.02.2019 թ. N Լ-597 լեռնհատկացման ակտը և ընդերքօգտագործման 04.02.2019թ. N Պ-597 պայմանագիրը, համաձայն որի «ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլատրված է 45 տարի ժամկետով Անի համայնքի Բագրավան բնակավայրի տարածքում գտնվող Խարկովի տուֆի և պեմզայի հանքավայրում տուֆ քարի արդյունահանման աշխատանքներ իրականացնել, հաշվի առնելով «ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր տնօրենի 2024 թվականի հունվարի 15-ի դիմումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Բագրավան, 20-րդ փողոց, 1 հողամաս/, համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-022-0101-0044 կադաստրային ծածկագրով **10.45565 հեկտար** հողամասը (Վկայական N 29012020-08-0064) տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով մինչև՝ 2064 թվականի փետրվարի 4-ը, **550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ** տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել «ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետև՝ Ընկերություն, Պետական միասնական գրանցման համար՝ 48.110.977776, 2017-10-11, ՀՎՀՀ 05545733, գործադիր տնօրեն՝ Արտյոմ Տամիլի Ղումաշյան, անձնագիր՝ AR0228980, տրված՝ 2018-03-12, 018-կողմից, հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր 2001, Լազյան փողոց, շենք 25, բն. 3):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի վարձակալության պայմանագիր:

3. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Ընկերության միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Օրակարգ-13</u>

13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-022-0157-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 4.39971 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2009 թվականի մարտի 31-ի N 38-Ա հրամանով տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման 31.01.2013թ. ՇԱԹՎ-29/400 (նախկինը՝ 14/586) թույլտվության, լեռնահատկացման 31.01.2013թ. թիվ ԼՎ-400 ակտով, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման 31.01.2013թ N ՊՎ-400 պայմանագրով «ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլված է մինչև 2034 թվականի մարտի 13-ը Անի համայնքի Բագրավան բնակավայրի տարածքում գտնվող Ռունազի պեմզային տուֆի հանքավայրում իրականացնել տուֆ քարի արդյունահաման աշխատանքներ:

Օրենսդրությամբ սահմանված կարգով լեռնհատկացման ակտի կոորդինատներով սահմանազատված արոտ հողատեսքի հողամասի նպատակային նշանակությունը փոխադրվել է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակություն, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակություն:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով:

Զեկուցողը ներկայացրեց, որ որոշման նախագծով նախատեսվում է՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-022-0157-0006 կադաստրային ծածկագրով 4.39971 հեկտար մակերեսով հողամասը (Վկայական՝ 28022022-08-0055) տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով, մինչև՝ 2034 թվականի մարտի 13-ը, 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել «ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴԻ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը (Պետական ռեգիստրի գրանցման վկայականի համար՝ 273.110.03015, գրանցման ամսաթիվ՝ 2001-07-19, ՀՎՀՀ՝ 01539983, Գործադիր տնօրեն՝ Անուշավան Ժորայի Գևորգյան, անձնագիր՝ AL0445299, տրված՝ 29.09.20232, 022-ի կողմից):

Քննարկման արդյունքում առաջարկություն ներկայացվեց ընդունել համայնքի ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-022-0157-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐՈՎ 4.39971 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 105 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2009 թվականի մարտի 31-ի N 38-Ա հրամանով տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման 31.01.2013թ. ՇԱԹՎ-29/400 (նախկինը՝ 14/586) թույլտվությունը, լեռնահատկացման 31.01.2013թ. թիվ ԼՎ-400 ակտը, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման 31.01.2013թ N ՊՎ-400 պայմանագիրը, համաձայն որի «ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլավված է մինչև 2034 թվականի մարտի 13-ը Անի համայնքի Բագրավան բնակավայրի տարածքում գտնվող Ռունազի պեմզային տուֆի հանքավայրում տուֆ քարի արդյունահաման աշխատանքներ իրականացնել, հաշվի առնելով ընկերության գծադիր տնօրենի 2024 թվականի հունվարի 26-ի դիմումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-022-0157-0006 կադաստրային ծածկագրով **4.39971** հեկտար մակերեսով հողամասը (Վկայական՝ 28022022-08-0055) տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով, մինչև՝ 2034 թվականի մարտի 13-ը, **250 000 (երկու հարյուր հիսուն հազար)** Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել «ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴԻ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը (Պետական ռեգիստրի գրանցման վկայականի համար՝ 273.110.03015, գրանցման ամսաթիվ՝ 2001-07-19, ՀՎՀՀ՝ 01539983, Գործադիր տնօրեն՝ Անուշավան Ժորայի Գևորգյան, անձնագիր՝ AL0445299, տրված՝ 29.09.20232, 022-ի կողմից, հետագայում Ընկերություն):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

բ) Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Ընկերության միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Օրակարգ-14

14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0020-0183 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.01215 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան քաղաքացուց ստացվել է դիմում՝ համապատասխան ներդրումներ կատարելու և ավտոտոխսպասարկման կայան կառուցելու համար հողամաս տրամադամադրելու խնդրանքով:

Կառարված ուսումնասիրությունների և արդյունքում ավտոտեխսպասարկման կայանի կառուցման համար նախընտելի համարվել Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0020-0183 կադաստրային ծածկագրով 0.01215 հեկտար հողամասը, որը գտնվում ՝ Մարալիկ քաղաքի Հ. Շահինյան փողոցի հարող տարածքում գտնվող թիվ 16/3 հողամասը:

Որոշման ընդունը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 68-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով:

Զեկուցողը ներկայացրեց, որ որոշման նախագծով նախատեսվում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0020-0183 կադաստրային ծածկագրով 0.01215 հեկտար հողամասը (հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շահինյան փողոց, 16/3 հողամաս, Վկայական՝ N 19012024-08-0021) օտարել աճուրդով՝ այդ հողամասում հասարակական նպատակային նշանակության՝ ավտոտեխսպասարկման կայան կառուցելու համար: Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին է սահմանվել տվյալ հողի կադաստրային արժեքի 300 տոկոսի չափով՝ 384 920 ՀՀ դրամ:

Քննարկման արդյունքում առաջարկություն ներկայացվեց ընդունել համայնքի ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0020-0183 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.01215 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 68-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարարական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0020-0183 կադաստրային ծածկագրով 0.01215 հեկտար հողամասը (հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շահինյան փողոց 16/3 հողամաս, Վկայական՝ N 16022024-08-0031) օտարել աճուրդով՝ այդ հողամասում հասարակական նպատակային նշանակության՝ ավտոտեխսպասարկման կայան կառուցելու համար:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով նախատեսված աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու աճուրդի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

<u>Օրակարգ-15</u>

15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ 08-003-0602-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ հասցեավորում չունի Մարալիկ քաղաքի քաղաքային պուրակի հյուսիսային մասով անցնող փողոցը, որով տրանսպորտային միջոցների երթևեկությունը համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ արգելվել է: Հասցեի բացակայության պատճառով խնդիրներ են առաջացնում այդ փողոցի վրա գտնվող շենքերի և շինությունների

օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան հասցեներ տրամադրելու համար:

Որոշման նախագծով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք Մարալիկ քաղաքի 08-003-0602-0001 կադաստրային ծածկագրով ներբնակավայրային փողոցը անվանակոչել <<մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց, 1-ին փակուղի>> /Կադաստրի կոմիտեի կողմից ընդունվել է նշված հացեավորումը և տրամադրվել է համապատասխան Ծածկագիր /080036ZJY47H/:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 4-րդ և 12-րդ կետերի դրույթներով:

Քննարկման արդյունքում առաջարկություն ներկայացվեց ընդունել համայնքի ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ 08-003-0602-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարությ 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված <<Անշարժ գույքի՝ ըստ դր գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման վարման կարգի>> 4-րդ և 12-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով Հայաստան Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի 08-003-0602-00 կադաստրային ծածկագրով ներբնակավայրային փողոցը չունի անվանակոչում.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք Մարալիկ քաղաքի 08-00 0602-0001 կադաստրային ծածկագրով ներբնակավայրային փողոցը անվանակոչել **<<մա Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց, 1-ին փակուղի>>** /Ծածկագի 080036ZJY47H/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգ-16</u>

16) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-049-0226-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.951935 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան քաղաքացուց ստացվել է դիմում՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով Լուսաղբյուր բնակավայրում 2,0 հա արոտ վարձակալելու խնդրանքով:

Քաղաքացու կողմից նախընտրելի է համարվել Անի համայնքի Լուսաղբյուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-049-0226-0032 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի 2-րդ կարգի 1.951935 հեկտար մակերեսով հողամասը:

Հարցը ընդրկվել է ընթացիկ նիստի օրակարգում, սակայն Լուսաղբյուր բնակավայրի վարչական ղեկավարի հետ, նախընտրելի համարված հողամասը վարձակալության տրամադրելու հարցը քննարկելիս, պարզ է դարձել, որ այդ հողմասի որոշակի հատված գյուղի գյուղացիական տնտեսությունների կողմից օգտագործվում է անասոնների անցատեղի և առկա է բնական առվակից կուտակվող ջրափոս, որի ջրային պաշարները օգտագործվում են անասունների խմելու կարիքների համար:

Հարցը լրացուցիչ ուսումնասիրելու, հանրային կարիքների համար օգտագործվող տեղամասերը հողատարածքից հանելու կամ համապատասխան սերվիտուտ կիրառելու համար խնդրում եմ հարցը հանել օրակարգից՝ առաջիկա նիստում քննարկելու համար:

Առաջարկությունն ընդունվեց համայնքի ավագանու կողմից:

Անի համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգի հարցերը սպառվեցին, նիստը հայտարարվեց փակված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ-11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՁԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------

Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Ն. ՍԱՐՈՅԱՆ	_____	_____	_____
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	_____	_____	_____
Մ. ԵՆՈՔՅԱՆ	_____	_____	_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

Արձանագրեց՝
ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի
աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր
պաժտոնակատար՝
Հ. Համբարյանը _____

<<15>> փետրվարի 2024 թ.
քաղաք Մարալիկ